


Սփրատ Բիւրօս  
Խմբագրութիւն «Փիիհիկ»,  
Աղեքսանդրիա



S. Burat  
Redaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ  
Չ.Բ.Ե.  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՏԱՄՍԵԱՅ 25  
—  
ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է

# Փ Ի Ի Կ Ի Կ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ  
ՏՐ.  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՏԱՄՍԵԱՅ 8  
—  
ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ՐԱՂ. 6

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԵՌԻՔԷ ԿԸ ԾՍ.ԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂՁ

Բ. ՏԱՐԻ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 17

## ՄԻՐՈՅ ԷՋԵՐ

### ՍԷՐԸ ԿՆՈՂ ՄԷՋ

Խօսքը «երեսուն տարեկան կնոջ» վրայ է. ինչպէս կ'ըսեն Ֆրանսացիները: Սէրը՝ կնոջ այս տարիքին մէջ՝ իր դազածնակէտը կը հասնի: Օրիորդ մը, աղջիկ մը որչափ ալ չափահաս, զարգացած ըլլայ, որչափ ալ սաստիկ սիրէ իր «պաշտելի էակ»ը չ'կրնար զգալ, ունենալ ու, եթէ ներուի, պիտի ըսեմ ըմբռնել այն սէրը, զոր կըզգայ երեսուն տարեկան կին մը իր մտերմին նկատմամբ: Այդ տարիքին մէջն է միայն, որ կ'ըմբռնեն նա սէրը, կը գիտնայ սիրել գիտակցաբար: Բժական գիր է նա սիրոյ մասին. կուզէ որ սովորական մարդ մը ըլլայ իր սիրա-

ծը ու լաւ յատկութիւններ ունենայ: Որո՞նք են սակայն այն յատկութիւնները որ արժանի կ'ընեն մարդս «երեսուն տարեկան» խելացի, գիտակ, զգայուն ու ազնիւ կնոջ մը սիրոյն: Կամ, ուրիշ բառերով, «կիները մարդոց ո՞ր յատկութիւնները կը սիրեն»:

Այս է նի: թը այն յօգուածին զոր «Rafford Pyke» կ'ընտրէ Cosmopolitanի վերջին թուոյն մէջ: «Rafford Pyke» մեծ համակրանք կը խօսի կնոջ վրայ: ու՛ իր այդ յօգուածին մէջ՝ այնքան խոր կերպով կը թափանցէ կնոջ սիրտը, փիլիսոփայի մը պէս կը պարզէ անոր բնութեան էութիւնը, որուն նմանը, գոնէ ես, քիչ անգամ հանգիպած եմ:

Կիները, կ'ըսէ նա, անուշ նայուածքներէն կ'ախորժին, բայց կը սիրեն աւելի այն մարդը որ բարձր է իր նմաններէն — առաւելութիւն մ'ունի: Անխուժութեան կը ներեն, բայց չ'են սիրեր զայն: Նախանձը, սակայն, միշտ իր տեղն ունի անոնց սրտին մէջ:

Ընդհանուր savoir faire, ինչ լինել գիտնալը՝ մեծ արժէք ունի կնոջ քով: Առատաձեռնութիւնը կը սիրէ նա. կծծիութիւնը ամենամեծ թերութիւնն է թերեւս անոր աչքին: Մեծութիւնը — ուժի մեծութիւնը — իր ծայրահեղութեան մէջ անգամ, սիրելի է իրեն, որովհետեւ ինչպէս կը գիտէ «Rafford Pyke».

«Կինը կը սիրէ հաւատալ թէ՛ ուրիշ ամեն մարդու նկատմամբ դատան, գէշ եղող մէկը՝ կրնայ կնոջ մը չափ գորովալի ըլլալ իրեն հետ»...

Ատկէ զատ.

«Կիները, կը շարունակէ նա, աւելի շատ այն մարդիկը կը սիրեն որ կարող են նախճիրներ գործելու»:

«Rafford Pyke» կրնայ ինքզինք փրկութիւն ապրել, բայց չ'եմ գիտեր թէ հասարակ, սովորական գրիչ մը կարող է արտագրել սա տողերը. թէ ի՞նչ է կնոջ մը համար ամենաքաղցր բանը աշխարհի վրայ:

Յօդուածագիրը կ'ըսէ —

«Հասկցուիլ իրապէս, ըսել թէ ի՞նչ կը սիրէ, իր իսկ գիտցած կերպով արտայայտել իր ամենաներքին խորհուրդները, մէկ կողմ'նետեղ զինք խեղդող, ճնշող աւանդութիւնները. ունենալ քովը մէկը՝ որուն հետ կարելի ըլլայ բոլորովին անկեղծ ըլլալ, ու գիտնալ միեւնոյն ժամանակ թէ իր ըսածներէն վանկ մ'անգամ սխալ չի պիտի հասկցուի՝ մեկնուի, այլ՝ մանաւանդ՝ պիտի զգայ նա ա՛յն՝ ինչ որ կ'զգայ ինք — ասկէ աւելի քաղցր, անուշ ի՞նչ կրնայ ըլլալ կնոջ մը համար. աւա՛ղ սակայն որ կնոջ այդ երանութիւնը տուող մաշգիկ շատ քիչ կան»:

«Ո՞վ կրնայ նկարագրել այդ հիանալի մտերմութիւնը, մարդկային յարաբերութեան այդ հրաշքը, քաջահասկացողութեան, պատուական քաջընտրութեան, հրաշալի համակրու-

թեան այդ հազուագիւտ համաձուլումը...: Զայն ունեցողներ կան»:

Ու երբ կ'ինը անանկ մարդու մը հանդիպի և,

«Կէս ժամ միայն տեսնուի անոր հետ, կը շարունակէ «Rafford Pyke», կ'ըսիսի ըսել, պատմել անոր անանկ բաներ որ երբէք խօսած չէ եղբորը կամ քրոջ, մօրը կամ ամուսնոյն կամ նոյն իսկ իր ամենամտերիմ մէկ բարեկամուհւոյն»:

«Երեսուն տարեկան կ'ին»ը կը սիրէ այնպիսի մարդ մը որ բան մը ըրած, գործ մը կատարած է...:

«Եթէ սիրէ զանի, ուրիշին սէրը կունենայ իր մէջ մայրական սիրոյ այն տաքը՝ առանց որուն կնոջ մը սէրը կատարեալ չէ երբէք: Ինչ է նա. կը խնդակցի անոր յաջողութիւններուն, և կը ջանայ սփոփել, քաջալերել զայն երբ ճախողանքի մը հաղիպի»:

Վրէժխնդրօրէն կ'ատէ անոր թըշնամիները: Կը փափագի օգնել անոր, խրախուսել զայն:

«Բայց ա՛լ աւելի քաղցր են կնոջ այն վայրկեանները երբ իր մտերիմը կը տկարանայ, կը հիւանդանայ կամ կը վհատի. որովհետեւ այդ ատենն է որ մարդս՝ իր այդ վիճակով՝ դերագոյն կոչ մը կ'ընէ անոր ամենախոր և ամենագորովալի զգացումներուն. ճիշդ այդ տեղն է, որ մայրական գորովի յորձանք մը կուգայ կնոջ վրայ, ու մինչ իր մայրութիւնը կ'ընէ նա, կնոջական բնութիւնը ամբողջապէս կը զարթնուի իր մէջ»:

Բայց կ'ինը միշտ կ'ին է. և երբ իրեն ժամը գայ — սէրը այլ ևս իր մէջ ամենաբարձր կէտին հասած — ճէյքսըրի զիւցազնուհիներուն պէս, կը մոռնայ

«Իրեն պղտիկութեան ատեն իրեն արուած կըթութիւնը, իր սեռին մնացած աւանդութիւնները, վախը, կասկածը, վարանքը — ոտքին տակ կ'առնէ

ասոնք ամենք, կերթայ կը փնտռէ  
գտնալ իր պաշտելին որուն առջև կը  
կենայ այն փառաւոր անամօթութեամբ  
որ՝ ամենաազնիւ բանն է կատարեալ  
սիրոյ մէջ»:

«Rafford Pyke» իր այս ա՛յնքան  
կարճ յօդուածով խիստ ընդարձակ  
գաղափար մը կուտայ կնոջ, «երեսուն  
տարեկան կնոջ» սիրոյն ու բնութեան  
վրայ:

ՎԱՀԷ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Տ. Եղիշէ Թորոսեան (?)

Ձեր ինկած օուկանի 208 թուի մէջ  
մեզ պատկանեալ շարունակելի յօդ-  
ուածը, կամ աւելի ճիշդ հայհոյանք-  
ները կարգայի, կը փութամ յայտնել  
որ, ձեր միամտեայ տքնութեան աղ-  
տոտ արդիւնքը չ'վիրաւորեց ո՛չ մեր  
ականջները, և ո՛չ ալ զգացումները,  
այլ խորին արհամարհանքի թուք մը  
խլեց մեզմէ, որին իսկ արժանի չէր  
ձեր վաղուց արգէն թքանքների ըն-  
տելացած անպատկառ երեսը:

Յարգելի Պարոն (1) ձեր գծուծ  
անցեալը ու անփառունակ ներկան ոչ  
միայն մեզ, այլ ամբողջ Եգիպտահա-  
յոց համար բաւական ստուար յիշա-  
տակներ է թողել ձեր մասին տխուր  
գաղափար մը կազմելու, մանաւանդ  
այս վերջին օրերը Աղեքսանդրիոյ Ա-  
ռաշնորդարանէն վզկապ մ'ալ ստա-  
նալէդ ետքը: Ծիծաղելի է սակայն  
կանանց սեռի նկատմամբ ձեր ունե-  
ցած անհեթեթ կարծիքին «Հանրային  
կարծիքի» բնաւորութիւն տալու ապար-  
դիւն ջանքերնիդ, որովհետեւ գծուար  
է երեւակայել թէ ամբողջ օրը խու-  
ւարտաւանների սեզանի առջև, իսկ  
դիշերը, թողած ընտանեկան յարկը,

պիտարիաների կեղտոտ անկիւնները  
սլքտացող՝ մթին հասարակութեան մը  
ներկայացուցչի կէս մէթրօ բերանէն  
դուրս ճայթքող աղտեղութիւններ երբ  
և իցէ կրնան հանրութեան արհամար-  
հանքը շարժել դէպ ի կանանց սեռը:  
Վստահ եմ ըսելու թէ՛ հանրութիւնը  
կազմող մէն մի անհատ իր հասկացո-  
ղութեան չափով կարողացել է ու  
կրնայ գնահատել կանանց սեռի բա-  
րոյական բարձր արժանիքը, առանց  
սակայն կանգ առնելու գայթակղալից  
բացառութիւնների առջև. իսկ, եթէ  
դուք այդպիսի ճիւղը վիճակէ մը  
մղուած՝ իրաւունք կը համարիք լու-  
տանքներ տեղալ կանանց սեռի գլխին,  
ատոր ալ ո՛չ մենք ենք պատասխանա-  
տու և ո՛չ ալ կանանց սեռը:

Ներեցէք որ, Տէրունի խեղաքի  
մը հետ զբաղելու և զբաղեցնելու ա-  
նախորժ ձանձրոյթը կը հարկադրէ զիս  
առայթմ մէկզի դնել արդարութեան  
խարազանը. ու ես պիտի փակեմ նա-  
մակս մէկ ստախօսութիւննիդ, նոյն  
իսկ ձեր՝ իմ բարեկամիս ուղղած նա-  
մակներով հշապարակ հանելէ յետոյ:  
Դուք Պ. Եղիշէ (1) ձեր յօդուածի հայ-  
հոյանքի շրջանը աւարտելէ անմիջա-  
պէս ետքը, կանցնիք վաճառականա-  
կան շրջանին, և հուսկ յետոյ ոտք կը  
դնէք ստախօսութեան բաժանմունքը,  
ու «Վերջալոյսի Չայներ»ու հրատա-  
րակման առթիւ, կարգ մը անճէր ու  
երեւակայական առատաձեռնութիւն-  
ներ ալ ու ձախ սփռելէ ետքը կը  
հասնիք գրաչարական խնդրոյն ճիշդ  
հետեւեալ բառերով — «Դալով գրա-  
չարական խնդրոյն, այն ալ կարևոր  
խնդիր մը չէ ձեզ համար, քանի որ  
ունինք, կրտէք: Իսկ ես ձեր սիրոյն  
համար, որչափ ալ ինձ բոլորովին ան-  
ծանօթ մէկը, ամեն իրաւունք ունիմ,  
Արշալոյսի տպարանէն ներս չ'հանդիպ-  
ցնելու, այդ զոհողութիւնն ալ կրնեմ,  
բա՛ւ է որ ձեր գործը գլուխ պիտի

ելլէ»։ —

Ահա բարեկամիս ուղղուած նա-  
մակների քաղուածը.

«Գահիրէ 25 Մարտ 1901

Առաւօտեան պահուն

Սիրելի նազչճի

Արդէն նախորդ նամակաւս գրած  
էի թէ մերգրաչարը, Յովսէփ, (1) վեր-  
ջապէս յաջողեցան մեր ձեռքէն առնել  
այլ և այլ միջոցներով չլացնելով զայն.  
արդէն դուն Յովսէփը կը ճանչնաս,  
հայրը թուրք կամ հայ, մայրը ֆել-  
լահ, եղբայրը եահուտի, քոյրը ջը-  
հուտ, ինքն ալ այդ ամենուն խառ-  
նուրդը, ալ ի՞նչ կը յուսաս... Եթե  
տիկտէն ավարա բան մը:

Ձեմ գիտեր թէ ե՞րբ պիտի դուն  
գործի ձեռնարկես, բայց այնպէս կերե-  
ւակայեմ թէ հազիւ մէկ երկու ամիսէն  
հետեալքար մինչև դուն գործի սկսելդ,  
եթէ կրնաս, հետդ բերած գրաչարդ  
մեզի դրկես, որ քիչ մը օգնէ մեզի,  
ամսական թեթեւ բան մ'ալ կը վճա-  
րեմ, սանկ մինչև երեք օսկի, շուտով  
գրէ նպատակդ, եթէ մինչև վաղը  
գրաչարդ հասցնես դէշ չըլլար:

ԵՂԻՇԷ

Յ. Գ. Գրաչարդ զրկելու չ'մոռ-  
նաս քանի մը օրերու համար:

ՆՈՅՆ

Գահիրէ 25 Մարտ 1901

Կէս օրին

Նազչճի

Այս պահուս կը լսեմ թէ ն... .

(1) Վերես յիշուած գրաւար Պ.  
Յովսէփի այդ աստիճան լիբ հայհո-  
յանքների ենթակուելուն պատճառը  
իւր ունիկի անկանոն վճարումին հա-  
մար բողնել հետանալն է եղեր, այդ  
խոսովանելէ մեզ Պ. Եղիշէ Թորոս-  
եան:

էթը դէմս դատ մը բացած է, (ա-  
ռանց մէկուն յայտնելու) շուտով ազ-  
գասիրաբար հոս գաս՝ թերթը շարու-  
նակելի ընելու համար, պէտք է դիտ-  
նաս որ ես անոր... կը. կը... չ'ըլ-  
լայ որ յապաղիս, գրաչարդ այ մնիկեդ  
բերես, ծօ՛, պիտի բարձրանա՛մ (եաղ-  
մայ չ'կայ) այդ վատին ճակտին դնե-  
լով պէտք եղած դրոշմը:

(Բարեկամդ)

ԵՂԻՇԷ

Յ. Գ. Ստիպողական կերպով վա-  
ղը պէտք է հոս լինիս:

—(Ամսականը կանխիկ էիր վճա-  
րել):

ՆՈՅՆ

Արդ, Պ. Եղիշէ, ձեր անվութօրէն  
չուայլած խաբեպատիր խօսքերը. ո-  
րով ջանացել էք հաւատացնել թէ  
դուք զիս չէիք կամենալ Արշալոյսի  
տպարանէն ներս մտցնել, և թէ այդ  
զոհողութիւնը մի միայն 'ի սէր Օր.  
Մարի Պէյլէրեանի, և իր խօսեցեալ Պ.  
Ալօի յանձն էք առեր, ինքնին հակա-  
սութեան մէջ կիցնան, բայց մեզ շա-  
հագրողողը գլխաւորաբար ձեր խա-  
բեբայութիւնը յանդիմանելը չէ, ցոր-  
չափ վերցնել ձեր հոգեկան աշխարհի  
սև քողը, որի տակ դեռ ևս շատ մը  
բռնադատուած իրաւունքներ պիտի  
հեծէին, եթէ բարեպատե՛հ հանդա-  
մանքները չ'պատուէին զայն:

Նամակնուդ կէտադրութեամբ բաց  
թողուած մասերը մեզ վերապահեցինք.  
նկատի ունենալով որ, աներեւակա-  
յելի աղտեղութիւններով համեմուած  
խօսքերու 'ի ժամու և 'ի տարածա-  
մու գործածելու մեկնաշնորհը ձեզ կը  
պատկանի. և մենք ալ մեր կողմէն  
Եղիշէ Թորոսեանի մը յատուկ, զղուելի  
դեր մը կատարելու ստորնութիւնը  
յանձն առնելու միտք չունինք:


ԿՍՐՍ.ՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ

Աղբ.բսանդրիա 9|8 Սեպտ. 1901

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

## ԲԱՐԻՉԻՆ

(Շար. ԺՁ. քիւէն եւ վերջ)



Պ. Գալիաքճեան ի լուր ժողովրդեան կարգաց վճռազիրը, ուր երկու դատաւորներ Պ. Չօպանեանի գէմ եղած ամբաւտանութեանց առաջին և երրորդին համար «ոչ ապացուցուած» կրսեն թէև, բայց երրորդ դատաւորը հոն ալ անանկ գիտողութիւններ կընէ որ մարդու մէջ բաւականէն աւելի զօրաւոր կասկածներ կը յարուցանեն:

Պ. Իսկէնտէրի խնդրոյն դալով Պ. Գալիաքճեան իւր սովորական անկեղծութեամբ համարձակ յայտնեց թէ խաչադողութեան խնդրոյն համար Պ. Իսկէնտէրի տուած բացատրութիւններուն վրայ իրենց այդ ամբաստանութիւնը ետ քաշած են, որովհետև խաչադողներ չահագործեք են եղեր Պ. Իսկէնտէրի անունը առանց իր գիտնալուն: Եւ ամբաստանողները գիտնալով հանդերձ որ Պ. Իսկէնտէր այդ խաչադողներուն հետ վերջէն ատուակ մը գործակցութիւն ունեցած է, բայց չեն ուզած ծանրանալ ատոր վրայ: Մնացեալ երկու կէտերուն համար ալ դատաւորներէն երկուքը, կրկին խնայողաբար ըսած են թէ՛ «Պ. Իսկէնտէր ինքզինքը ըստ բաւականին արդարացուց», իսկ երրորդ դատաւորը հոս ալ իր անվերապահութեան ապացոյցը տուած է ստորագրելով իր կարծիքները, որոնք այնքան ալ դժուարական չեն Պ. Իսկէնտէրի նկատմամբ:

Ահաւասիկ վճիռները, աւելցուց Պ. Գալիաքճեան, ասոնցմէ դուրս երկու դատաւորները, մանաւանդ Պ. Թամաձէֆ, ինծի այնքան անվերապահօրէն յայտնած են իրենց համոզումները որ լսելով պիտի տեսնէք թէ այդ

մարդոց հաւատքը ո՛րքան խախտած է Պ. Իսկէնտէրի և մանաւանդ Պ. Չօպանեանի նկատմամբ: Եւ հոս հաստատ չեշտերով ի մէջ բերաւ այդ յայտնութեանց կարևոր կէտերը, որոնցմէ կը տեսնուէր թէ Պ. Պ. Թամաձէֆի և Ամբարսեֆի համար այսուհետև իսկապէս անկարելի պիտի ըլլար գործակցիլ իրենց խղճատանքին առջև դատապարտուած մարդոց հետ: Եւ արդարև մեր ուստահայ եղբայրները ճնօրէն ժողովոյ լուծման և վերընտրութեան անհրաժեշտութեան մասին զանազան վստահելի անձերու խօսած են, և այս մտօք սլ Յուլիս 1ին կերթան իրենց հրաժարականը տալու, բայց հասկնալի նկատումներու առջև չեն սնդեք իրենց հրաժարականին վրայ:

Այս խնդրոյ վերաբերեալ շատ մը հետաքրքրական վաւերաթղթեր, ի միջի նշլոց Պ. Չօպանեանի մեկ նամակը, մէջ տեղ դնելէ և իր խօսքերը ամփոփելէ յետոյ՝ Ահաւասիկ, պարոններ, ըսաւ Պ. Գալիաքճեան, խումբ մը փարիզաբնակ ազգայնոց կողմէն ասպարէզ դալով, այս դառն ճշմարտութիւնները երևան հանեցինք յօգուտ հանրային շահերու: Հիմա ձեզի կըմնայ ձեր բռնելիք ուղղութիւնը որոշել նոյն նուիրական շահերուն հանդէպ: Մենք ընկերութիւնը քանդելու միտք չունինք, այլ կըցանկանք որ ան աւելի խեղացի և աւելի վստահութիւններ չնշող պայմաններու ներքե վերակազմուած՝ կանգուն մնայ և ծառայէ ազգին միայն:

Յետոյ խօսքը առին Պ. Պ. Գալիաքճեան (Աղեքսանտրիայէ նոր եկած) և Իփէքեան (երբեմն Աղեքսանդրիա դտնուած): Այս պարոններ ըսել ուղեցին որ Չէյթուն գրքին տպագրութեան խնդիրը անձնական գործ մը ըլլալով ուրիշներ իշտուենք չունին ատոր վրայ հիմնուելով վճիռներ արձակելու: Այս միջոցին ժողովուրդէն

«Փաշան այս գրամը ազգային դատի փրփականդին համար տուած է» ձայն մը լսուեցաւ: Պ. Իփէքեան կարծելով թէ հոս խումբ մը Հայեր «Գլիւպ մը կը հաստատեն, այդ Գլիւպին վրայ դիտողութիւններ ընելու» իրաւունքը կըզլանար ուրիշներուն: Բայց զանազան ձայներ լսելի եղան ժողովուրդէն թէ «կազմուածը գլիւպ մը չէր»: Նոյն պարոնը՝ ակնավաճառները անարգող ձախող բառ մը սպրդեցուց իր բերնէն, որուն վրայ բոլոր ներկայք զայրոյթով պահանջեցին որ պարոնը իր խօսքը ետ առնէ և Պ. Իփէքեան, իր մեղմացուցիչ բացատրութեանց անբաւականութիւնը տեսնելով, ստիպուեցաւ իր խօսքը ետ առնել:

Ամենէն վերջ խօսք տրուեցաւ Պ. Միհրդատեանի: Պ. Միհրդատեան նորակազմ ընկերութեան ապօրէն կազմութեան և անոր Տնօրէն ժողովոյ երկու անդամոց դէմ յարուցուած արդար բողոքներուն գոհացում տալու մտօք առաջարկեց հետեւեալ բանաձեւը.

«Փարիզի մէջ վերջերս հիմնուած հայկական Միութեան Տնօրէն ժողովը առժամեայ հանգամանք մը ունենալով, և անոր ընտրութեան առթիւ ծագած ըլլալով շատ մը խնդիրներ, որոնք կրնան արգելք ըլլալ Միութեան նպատակին իրագործումին, Փարիզի Հայ գաղթականական ժողովս իղձ կը յայտնէ ընդհանուր ժողով գումարել առժամեայ Տնօրէն ժողովին հրատարականը ընդունելու և վերջնական Տնօրէն ժողով կազմելու համար, առանց Միութեան կանոնագրին Ֆրանսական կառավարութենէն վաւերացումին սպասելու»:


Այս բանաձեւը ընդունուեցաւ վեցի դէմ միաձայն հաւանութեամբ և ժողովը ցրուեցաւ կէս գիշերը քառորդ անցած:

Առ հասարակ տիրող կարծիքն այն

է որ յիշեալ Միութեան գլխաւոր հիմնադիրները. Պ. Պ. Թամամչէֆ և Ամբարօֆ պիտի գիտնան յարգել Յուլիս Յի գաղթականական ժողովոյ որոշումը և պիտի փութան ձեռնարկել Տնօրէն ժողովոյ վերընտրութեան, որուն անհրաժեշտութիւնը շեշտած էին և իրենք շատերուն: Հակառակ պարագային երկիւղալի է որ տխուր հետեւանքներ ունենայ այս միջադէպը: Որովհետեւ խնդիրը յուզողները, ոմանց կարծեցնել ուզածին պէս, Պ. Պ. Գալփաքեան և Գայաեան միայն չեն, այլ ինչպէս Grand Orient ի ժողովին մէջ տեսնուեցաւ, 100 է աւելի գիրք, նշանակութիւն և խելք ունեցող Հայեր, որոնց մէջ Պ. Պ. Իսկէնտէր և Չօպանեան իրենց երբեմնի բարեկամներէն պատկառելի թիւ մը պիտի տեսնէին, եթէ ընդունելով իրենց եղած հրաւերը՝ ժողովին անձամբ ներկայ դանուելու և ի հարկին ինքզինքնին պաշտպանելու քաջութիւնն ունենային:

Մաղթենք վերջապէս որ խաղաղութիւնը և խոհեմութիւնը վախճան դնեն այս միջադէպին, և մենք մեր ազգային բազմակնճիռն հարցերուն մէջ դէթ մտահոգութիւն մը պակաս ունենանք: (1)

ԿՈՐԻԻՆ



(1) Սոյն քոթակցութիւնը հրատարակեցինք անկողմնակալութեամբ, բայց ո՛չ նուազ ցաւ զգալով անոր պարունակութեան մասին: Բարիգի նման կարեւոր կեդրոնի մը մէջ հաստատուած Հայերը պիտի կրնային առանց նեղութեան զնահատելի ծառայութիւններ մատուցանել հայրենիքին, քան թէ անպատեհօրէն ընդգրկել կարգ մը խնդիրներ, որոնք, դժբաղդաբար, այս կամ այն անձին շուրջը կը դառնան, առանց օգտակարութիւն մը

ԱՆՊԱՏԿԱՌԻ ԻՄԱՍՏԱԿՈՒԹԵԱՆ,  
ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

Ընթերցողները կը յիշեն թէ Տ. Լևոն Մկրտիչեանի «Սահմանադրութեան պաշտպանները» յօդուածին՝ ի մէջ այլոց, ես ալ պատասխանեցի «Փիւնիկ»ի մէջ հրատարակուած «Հրապարակային Աստիճանութիւն» վերնագրով յօդուածովս :

Արդի Պատ. Թաղական Խորհրդի հակասահմանադրական կազմութիւնը ինչ մերկ իրականութեանը մէջ ի տես հանրութեան ցուցադրող այդ յօդուածիս՝ Տ. Մկրտիչեան պատասխանեց զաֆարիական շոթքեանք: Այս իրողութիւնը ինքնին բաւական էր ողջ միտ ընթերցողներուն եզրակացնելու համար թէ՛ Սահմանադրութեան պաշտպանները յաղթական դուրս ելած են այս հրապարակային վիճարանութենէն. թէ՛ փաստերու և իրողութիւններու կրուանին վրայ անոնք անպարտելի են:

Իայց որովհետեւ հրապարակին վրայ տակաւին երկու գրութիւն կայ որոնք միա՛միտներուն կը ներկայացունին իբր հերքումը «Փիւնիկ» ի մէջ գրուածներուն, և այդ գրութիւններուն առաջինն է՝ դարձեալ Տ. Մկրտիչեանի բաց ստորագրութեամբ «Մահմանադրութեան պաշտպանները — բացարձակ

բերելու հանրութեան, եւ որոնց յուզուելէն յանախ կը գայթակղին մտերը, եւ պատահմանէ պոռնկացում կը գահավիժին. ասկից, ընդհանուր նողկանք ու վհասութիւն: Ինչո՞ւ չ'օգտուինք Արսասանմանի ընծայած դիրութիւններէն ու նպաստուր պայմաններէն, մեր ազգային յարանուն ցաւերուն դարմանն ու խոր վէրքերուն սպեղանին խորհելու եւ գտնելու համար միայն թափելով մեր նիզերն ու վիացնելով մեր բոլոր ուժերը... :

Մ. Խ.

թիւն մը» վերնագրով «Արշալոյս»ի 204 համարին մէջ հրատարակուած վերջին յօդուածը. երկրորդը՝ արդէն համբաւոր հակահանրագիրն է որով պատմական անվիճելի իրողութիւնները կը փորձեն անուաներու առաւելութեամբ տարակոյտի ենթարկել, պարտք համարեցի, մի կողմ թողլով այդ հակահանրագիրը, որուն ներկայացուցած գաղափարին տխմարութիւնը ինքնին հասկանալի է, և որուն ամբողջ հիմունքը Տ. Մկրտիչեանի շինծու փաստերը կը կազմեն, ձեռք առնել միայն նոյն Պարոնին երկրորդ յօդուածը և զայն վերլուծելով ներկայացնել հանրութեան դատաստանին:

Տ. Մկրտիչեանի այս երկրորդ յօդուածը երկու որոշ մասերէ կը բաղկանայ. առաջինը՝ իր անձին պաշտպանութիւնն է որով կը ջանայ ինքզինքը արդարացնել իրեն վերագրուած յանցանքներէն. երկրորդ մասը՝ իր առաջին յօդուածին պարունակութեան պաշտպանութիւնն է, կամ թէ ըսենք, Թաղական Խորհրդին սահմանադրական կազմութեան և օրինաւորութեան պաշտպանութիւնը, իբր պատասխան «Փիւնիկ»ի Օգոստոս 10ի շախշախիջ Յարեռուածին:

Մենք ալ հետեւելով իր դատակարգութեան, նախ պիտի զբաղինք այս գործին մէջ Տ. Մկրտիչեանի անձնական պատասխանատուութիւններուն հարցով, և երկրորդ՝ իր պաշտպանած դատով:

Ա.

Երբ «Փիւնիկ»ի մէջ իրարու ետեւ հրատարակուեցան Տ. Մկրտիչեանի Ա. յօդուածին պարունակութիւնը զօրաւոր պատճառաբանութիւններով ու փաստերով հերքող յօդուածներ, շատեր կը կարծէին թէ՛ Տ. Մկրտիչեան, որ արդէն իր պաշտօնին շնորհիւ ճշմարտութեան տեղեակ՝ գիտակցաբար

խեղաթիւրած էր իրողութիւնները, գէթ այս անգամ պիտի զգաստանար և գոնէ իր լուսթեամբը պիտի խոստովանէր իր սխալը և իր պաշտութիւնը, որով միևնոյն ժախնակ ապացուցած պիտի ըլլար թէ բարոյական նկարագիրը և արժանապատուութեան զգայումը բոլորովին մեռած չեն իր մէջ:

Սակայն երբ ակնարկուած յոգուածներէն առաջին երկուքը (այսինքն Յաւելուածը և Տ. Մ. Գալֆանտի նամակը) տեսնելէ ու կարդալէ վերջ՝ դարձեալ յանդգնած է «Արշալոյս»ի 204 համարին մէջ հրատարակուածին նման յոգուած մը արտադրել, ա՛լ իր նկարագրի մասին ամենէն լաւատեսներն անգամ յուսախար ըրած է վերջնականապէս: Արդարև այդ երկրորդ յոգուածին մէջ կը յամառի ստույթեան կռուանին վրայ կենալ, այդ կերպով կրկին անգամ գիտակցաբար ժողովուրդը խաբելու տխուր դերը կատարելով:

Եթէ Տ. Մկրտիչեանի առաջին յոգուածը «Հրապարակային Ստախոսութիւն» անուան արժանի էր, այս երկրորդը՝ Անպատկառ խնասակոռքեան գրուի գործոց մ'է:

Պատ. Թաղ. Խորհրդոյ պաշտօնաթերթ «Արշալոյս»ը ներշնչեալ յոգուածի մը մէջ Մամուլի բռնապետներ անուանած էր մեզ, որովհետև աղգային հարցի մը հրապարակային վիճարանութեան միջոցին, մենք մեր կարծիքները ազատօրէն յայտնելով հանդերձ՝ ուրիշներուն չենք ներեր եղեր որ տարբեր կարծիք մը յայտնեն. . . :

Խօսքի, մամուլի ազատութիւնը յարգելու դասը մենք ի հարկէ «Արշալոյս»ի ողորմելի խմբագրէն չպիտի առնէինք. բայց եկու տես որ խնդիրը կարծիքի ազատութեան վրայ չէ. եթէ այդ ըլլար խնդիրը, երբեք այնչափ խիստ չպիտի գոնուէինք Տ. Մկրտիչեանի տարբեր կարծիքներուն վերաբերմամբ: Խնդիրը սակայն ոչ թէ

կարծիքի վրայ է այլ կարծիք ու կասկած չվերցնող իրողութիւններու վրայ. իրողութիւններն որոնք ամէնուս ծանօթ են ու Տ. Մկրտիչեանին մասնաւորապէս ծանօթ: Յայտնի և անուրանալի իրողութիւններ խեղաթիւրելը, ինքնահնար վէպեր իրել և իրականութիւն պատմելը՝ ազատ, սեփական կարծիք յայտնելէ շատ տարբեր բան մ'է. նոյնպէս հասարակութեան պատկառելի մէկ մասին գլխուն լուտանքներ տեղալը՝ սեփական կարծիք յայտնելէ տարբեր բան մ'է: Եթէ «մամուլի ազատութիւն» ըսելով «Արշալոյս»ի խմբագիրը կը կարծէ թէ ամեն մարդ առանց ա՛յլ ու ձախ նայելու իր խելքին վիժածը հշտադարակնեակու իրաւունք ունի, թո՛ղ գիտնայ որ այդպիսի մամուլի ազատութիւն հոշագնդի ոչ մէկ մասին մէջ գոյութիւն ունի դեռ:

Տ. Մկրտիչեան իր երկրորդ յոգուածին սկիզբը պատասխանելով «Փիւնիկ» ի Յաւելուածին այն մասին ու՞ր ըսուած էր թէ ի՞նչ առաջին յոգուածը հանրային սրտնայտն անա՛յ ըբրած է, կըսէ.

«Երեւակը այն է որ պարտը շատ դող ելաւ մեր յոգուածին բովանդակութենէն, զի խօսքը մէջերնիս, նոյն իսկ իր ամենէն ջերմ պաշտողները սկսան գլուխնին քերել և մտածել թէ մեր ա՛յնքան օրինակաւ (!!! " ") տեսութիւններուն և դիտողութիւններուն դէմ ի՛նչ նոր փաստեր կրնային գրանուիլ և ի՛նչ միջոցի գիմելու էր ժողովրդին մտքէն փաշտակու համար այն խորունկ տպաւորութիւնը զոր այդ յոգուածը թողուց. տպաւորութիւն՝ որ ի հարկէ մեր պարտնին գործին չէր գար: — Տ. Մկրտիչեանի նկարագրին մէկ անբուժելի ախտանիշը այն է որ միշտ ուրիշներուն կը վերագրէ ինչ որ իրապէս իրեն վերագրելի է. ուրիշներուն գործը, գլխուճները կը ներկայացնէ այն գոյնով ինչ որ են իրենները. ա՛յն նախատինքները որոնց ինք

արժանացած է՝ կը թափէ ուրիշներուն վրայ: Ճիշդ նոյն հիւանդոտ աշուճ-դրութեան տակ գրած կերևի ամբողջ յօդուածը որը լեցուն է աշուճի հատուածներով. վերի գրածները ուրեմն կը մատնեն «Յաւելոյ» ին երևումին իր վրայ ունեւած աշուճութիւնը, իր դողը, իր շարժումը: Գալով այն խորունկ սպառութեան որ կը պարծի թէ թողած է իր հաւատարմութիւնը, իրաւ խորունկ է այն տպաւորութիւնը. տպաւորութիւն ընդհանուր նողկանքի, որը միշտ թաղմ պիտի մնայ և անջընջ էր:

Տ. Մկրտիչեան նոյն ոճով ու ոգիով կը շարունակէ. «Ինքը և իշ ընկերները տարբեր կերպով համոզած էին ժողովուրդին մէկ մասը և բաւական թուով անձերու ստորագրել տուած էին թաղ. Խորհրդի «Հակասահմանադրական» կազմութեան գէմ հանրագրութիւն մը. . . . Այդ հանրագիրը ստորագրողներուն ստուար մեծամասնութիւնը բուն եղելութենէն անտեղեակ ըլլալով, իրենց հաղորդուած ինտրաքիտեայ սեղեկութիւններուն համոզուելու և իրենց գրաւոր հաւանութիւնը յայտնելու էին: Ա՛յ ապաքէն մեր յօդուածը կարգալէ վերջը այդ անձերը պիտի սրտնայտի իրենց վստահութիւնը յարայար գործածողներուն դէմ»: — «Փիւնիկ» մէջ անժխտելի կերպով պարզաբանուեցաւ թէ ինտրաքիտեայ սեղեկութիւններ հարողոյր, ժողովրդին վստահութիւնը յարայար գործածողը ո՛վ է:

Հոս ալ Տ. Մկրտիչեան իշ գերին մէջն է. ժողովրդին ողջմտութեան հետ խաղալէ, անոր քթին խնդալէ վերջ, կ'ելլայ սիւնի կերպով իր այդ տխուր դիրքը ու գերը կընծայէ անոնց որ իր խեղաթիւրումները և սուտերը երևան հանելու: ճշմարտութեան պաշտպան եւ ժողովրդին բարեկամ են հանդիսացած:

Գալով Հանրագրութեան մասին իր գրածներուն, ականջը խօսի «Արշալոյս»

ին որ Տիար Մկրտիչեանի այս բացատրիչ յօդուածը հրատարակելէ վերջ ելաւ յայտարարեց թէ «Սահմանադրութեան պաշտպանները» յօդուածը «Փիւնիկ»ի «Անաբանելի խթան»ին պատասխանն էր պարզապէս, մինչդեռ Տ. Մկրտիչեան ինքը յայտնապէս կը խոստովանի թէ հանրագրին ազդեցութիւնը չեզոքացնելու և թաղ. Խորհրդի սահմանադրական կազմութիւնը փաստաբանելու նպատակով գրած է իր յօդուածը, ու կը պարծի ալ թէ յաջողեր է. . . :

Տ. Մկրտիչեան, միշտ նոյն ոգիով և ոճով որը իշ գրութիւններուն յատուկ է, «agent provocateur»ի դերը, «ժողովուրդը գրգռելու և խառնակութիւն առաջ բերելու միամիտ շարամուտութիւնը» կը ջանայ ձգել անոնց վրայ որ իր այդ ոգին մերկացուցին, և կը յաւելու թէ «ժողովուրդը այդ կարգի փաստակ վարպետութիւններու առթէքը աղէկ ըմբռնած է, և ասոր ապացոյցն ալ այն է որ յօդուածիս ընթերցումը ժողովրդին մէջ սրտմտութիւն առաջ չի բերաւ»: Ավելեցուցի՛չ անպատկառութիւն. ո՛վ չ'գիտեր, Ազեքսանդրիոյ մէջ ապրող ո՛ր հայ անհատը չի վկայել թէ իր այդ շարժումը յօդուածը սրտմտութիւն ու գայթակղութիւն առաջ բերաւ ո՛չ միայն Սահմանադրութեան պաշտպաններու բոլոր կարգերուն մէջ որոնց դեռ մէկ մասը միայն կը ներկայացնէ 210 թիւը, այլ և այս կամ այն կողմին չպատկանող անձեւորութիւններու մէջ ու նոյն իսկ արդի Պատ. Թաղ. Խորհրդի անդամներուն անհատապէս համակիրներէն շատերուն և մինչև անգամ նոյն ինքն Տ. Մկրտիչեանի բարեկամներէն ու կուսակիցներէն անկեղծներուն ու ճշմարտասէրներուն մէջ. . . . Այս ամէնը Տ. Մկրտիչեանի աչքին իբր ժողովուրդ չին երևար, այլ իբր «խնայ» մը, որ իր նուազական մասնիկով շատ քիչոր մարդոց պատիկ խումբ մը կը

նշանակէ)։ Իսկ իր մէկ քանի պաշտպաններուն և կուրօրէն իրեն հետեւողներուն, որոնք իր համբաւաւոր յօգուածին համար կերեւի վազած են զինքը շնորհաւորելու, չի վարանիր ժողովուրդ անունը տալ. ասկէ անխուսափելի կերպով կը հետեւի թէ Տ. Մկրտիչեան ինքն է որ իր պաշտպաններուն և արքանեակներուն հետ, կը յաւակնի առած ըլլալ «ժողովրդին մօնօրօլը», ինչպէս որ իրաւցնէ առած է արդէն ստախօսութեան մօնօրօլը... Հոս ալ ուրեմն, ինչպէս միշտ, իր դերին մէջն է։

Եւ այս մարդն է որ ելեր «հրապարակաւ, ամենաքառուն կերպով» կը բողոքէ ժողովուրդը նախատած ըլլալու «սոր ու ճրի զրպարտութեան դէմ» և կը պնդէ թէ ո՛չ մէկ ասեւն ժողովուրդը նախատած է ինք։

Վերև Տ. Մկրտիչեանի խօսքերովը հաստատեցինք թէ ինքը իր այդ նախատալից յօգուածը գրած էր ո՛չ թէ «Անաքացելի խթան»ին դէմ, ինչպէս հիմա փախուստի ճամբան բռնելով կը յայտարարէ «Արշալոյս»ի անանուն յօգուածովը, այլ Հանրագիրը ստորագրողներուն դէմ։ Արդարև, ի՞նչ նշանակութիւն ունէր Հանրագրին պաշտօնապէս ներկայացուած ըլլալը կամ ոչ անոր վրայ խօսելու համար, քանի որ անոր գոյութիւնը և պարունակութիւնը ամենուրեք ծանօթ էր, քանի որ «Փիւնիկ»ի դեռ 3 համարին մէջ անոր ամփոփումը հրատարակուած էր և յայտարարուած թէ՛ արդէն 160 ստորագրութիւններով ծածկուած է այն։ Ինքնայայտ է ուրեմն թէ յօգուածը հանրագրին դէմ հակահարուած մըն էր. ուրեմն ի՞նչպէս կարելի է անոր մէջի նախատինքները և լուտանքները մասնաւորել մի միայն մէկ քանի մարդերու, որոնց անուններն ալ տալու քաջութիւնը և ազնուութիւնը չէ ունեցած Տ. Մկրտիչեան՝ դէթ ոմանց

կասկածները փարատել կարենալու համար։ Հետեւապէս կը հարցնենք անաչառ ընթերցողներուն. Աղեքսանդրիոյ հայ դաղութին պէս փոքրաթիւ հաւարակութեան մը մէկ կարեւոր և պատկառելի մասը՝ խարեքսայ, եսաւոյ, իմաստակ, կոկոզավիչ, պոստր ջորի մեջ ճուլ որսացող և ասոնց նման մակդիրներով մկրտելը ժողովուրդը նախատել չէ՛ հապա ի՞նչ է։ Կամ վայրկեան մը ընդունելով իր երկրորդ գրութեան իբր թէ մեղմացուցիչ բացատրութիւնը, այսպիսի օրինաւոր պահանջ մը ստորագրողներուն մէկ մասը խարեքսաներ են և ներկայացնելով մնացեալ մասը, «սուառ մեծամասնութիւնը», ինչպէս ինք կըսէ, խարեքսութեան մը իբր անգիտակից զոհեր ներկայացնելը, առաջին մասը չարաչար զրպարտել, իսկ երկրորդ մասին՝ ստուար մեծամասնութեան՝ արժանապատուութիւնը վերաւորել, կամ մէկ խօսքով, ամէնքն ալ նախատել չէ՛ հապա ի՞նչ է։

Բայց ասկէ աւելին կայ։ «Փիւնիկ»ի էջերուն մէջ լիուրի հաւատառուեցաւ թէ Տ. Մկրտիչեան ժողովրդին կենսական մէկ դատին առթիւ հյապարակաւ սուտ խօսելով, իրողութիւնները խեղաթիւրելով ուզած է եւ դեռ կը յամառի ժողովուրդը խարեք, (և ո՞ր անաչառ մարդ կրնայ այսօր այս բանը ուրանալ)։ Արդ կը հարցնենք. ժողովուրդը խարեքը, անոր ողջմտութեան հետ խաղալը, կեղծիքներով անոր բարեկամ ձեւանալով անոր շահերը ոտքի տակ առնելը՝ ժողովուրդը նախատել չէ՛ հապա ի՞նչ է։ Այս ամէնը ո՛չ միայն ժողովուրդը նախատել է, այլ անկէ աւելի բան մ'է. ժողովրդին թշնամի հանդիսանալ է։

Տ. Մկրտիչեան պատասխանելով «Փիւնիկ»ի Յաւելուածին այն հարցման թէ՛ «արդեօք իրա՞ւ Սրբազան Առաջ-



իրենք, և այդ հարցումը ինքնին բնական կերպով չի ներկայանար, քանի որ յօդուածագրին անհասականութեանը քով իր քարոզարի պաշտօնը կայ և կրնայ կարծուիլ թէ այդ պաշտօնին բերմամբ տեղեկացած ըլլայ այդ պաշտօնական մարմիններուն կարծիքներուն: Բայց ո՞րչափ հզօրագոյն իրաւամբ այդ հարցումը և անոր պաշտօնապէս պատասխանելու անհրաժեշտութիւնը կը ներկայանան ներկայ պարագային երբ, ինչպէս տեսանք, քարտուղարը ո՛չ միայն յանուն իր անհատականութեան կը խօսի, ո՛չ միայն յանուն քարտուղարի կը խօսի, ոչ միայն, կըսեմ, պաշտօնին հեղինակութեամբ կը խօսի, այլ և յանուն Թաղական Խորհրդի և յանուն Առաջնորդի, և ա՛յս հաներաշխարհ (ՄԵՆՔ ԱՄԷՆՔՄ). այս ամենուն վրայ երբ աւելցնենք սա պարագան ալ թէ՛ այդ գրութիւնը երևցած է Թաղ Խորհրդի պաշտօնաքերթին մէջ որը հակառակ կողմէն նոյն խնդրին վրայ գրութիւն մը այնքան անազնութեամբ մերժած է հրատարակել, կը համարձակիմ կրկնել թէ ամեն ոք իրաւունք ունի Տ. Մկրտիչեանի այդ շարաշուք յօդուածը Պատ. Թաղ. Խորհրդին և Ս. Առաջնորդին կողմէն պաշտօնական յայտարարութեան մը համազօր նկատելու, ցորխափ պաշտօնապէս հերքում չի տրուիր:

(Շարունակելի)

**ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ**

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

1. Տիար Միհրան Տաճատեանի՝ ներկայ յօդուածին — որուն արդէն ուշացած էր հրատարակութիւնը — շարունակութիւնը ու վերջը.
2. Գահիրէէն նամակ մը մեր թըղ-

թակցէն.  
 3. Գահիրէէն «Երկու Այջկան Հայր» ստորագրութեամբ նամակ մը.  
 4. Ազեքսանդրիայէն Տիար Երուանդ Պոյաճեանի «Երկու խօսք»ը.  
 Վերոյիշեալ 4 կտոր յօդուածներն ալ, նիւթերու առատութեան պատճառաւ յետաձգուած, յաշորդ թիւով պիտի հրատարակուին:

**ՔՐՈՆԻԿ**

**Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.**

— ԿԱՐԻՆ ԿՈՒԻ ԿԱՅ. Կ. Պոլսէն Բաւուած հեռագրէ մը առնելով Շրանսական Թան լրագիրը կը ծանուցանէ թէ՛ վերջերս Կարնայ մէջ Հայերն ու Թուրք զօրքերը կասաղի ընդհարում մ'ունեցած են. երկու կողմէ բազմաթիւ վիրաւորեալներ ու սպանուածներ կան:

— ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ. Սեպտ. 1 ի Միջադէպին առթիւ. — Փար ս'Աշեֆսանսրի, Սեպտ. 1-2 ի թիւով «Յոյցի Զրոյցներ» վերնագրով հասուածիկ մը հրատարակած էր, Սուլթանին Գահակալութեան յասուի Քրոնիկի բաժնին մէջ, հասկցնել ուզելով թէ՛ Սեպտ. 1 ին Հայոց Եկեղեցին գտնուող գաղտնի ուսիկանները՝ նոյն օրը Սուլթանին ՚ի պատի մասնուցուած Պատարագի մը դէմ Բանի մը Հայերու կողմէն ըլլալիք Յոյցի մ'առաջին առնելու համար կանչուած են են:

Արդ, Ռեճօրմի Սեպտ. 3 ի թիւով «հայ մը» ստորագրութեամբ հրատարակուած լուսաբանող յօդուածի մը վրայ — որուն ծանօթացան մեր ընթերցանները — Փար ս'Աշեֆսանսրի յայտարարեց թէ՛ յիշեալ ուսիկանները Սուլթանին Գահակալութեան առթիւ ծա-

գելիք ցոյցի մ'առաջին ամեկու համար չ'էին դիտած են, են:

Այս յայտարարութեան դէմ նոյն Հաշր Ռեֆորմի մէջ ուրիշ ազդու եւ ջանջախիչ ներհում մը հրատարակեց, որուն վրայ ծար ստիպուեցաւ լռել:

Էնիքըն Կալեդ, Քաղաքի անգլիական կաթողիկոսացոյն օրաբերքը, խօսելով տեղական ազգ. կարգ մը խնդիրներու առթիւ տեղոյս Առժ. Թաղ. Խորհուրդին ու հայ հասարակութեան միջեւ ժամանակէ մ'իվեր շեղուող անհամաձայնութեանց վրայ, կը յանելու գրեթէ սա իմաստով.

«Փիւնիկ, յառաջդիմական կամ Բարեկորդիչ (Réformateur) բարդիին բերանը, (\*) բուն պայքար մը կը մղէ ազգ. օրէններուն բնաբարման դէմ. եւ թէ՛ յարաբերութիւններն այն աստիճան լարուած են որ, ԽՍՏ ՀՍ.Ս.ՆՍ.ՎԱՆ Է ԹԷ՛ Թ.Ս.Գ. ԽՈՐՀՈՒՐԴԸ, Ի՛ՆՔ ԲԵՐԵԼ, ՏՈՒԱԾ ԸՂԼԱՅ ԳՍ.ԳՆԻ ՈՍՏԻՎԱՆՆԵՐԸ:

Նոյն թերքը յոյս կը յայտնէ թէ՛ Վսեմ. Պօղոս բաւային միջամտութեան շնորհիւ ի մօտը վերջ մը դուրի այդ անհամաձայնութեանց լուծում տրուելով առկախ խնդիրներուն»:

— Ծանօթութիւն մը. — Տիար Զարեհ Գոչեան, Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչը, քաղաքի մէջ կը վայելէ ամեն վստահութիւն եւ համակրանք՝ հետեւաբար, «Փիւնիկ» ճախորդ թիւով Պ. Մ. Շաստիցեանի «քողովագիր մը» յօդուածին մէջ էտէն բասրոնի «Հաշր ներկայիս մէջ ու ապագայիս» բանախօսութեան նկատմամբ ակնարկութիւնը բնա վերաբերութիւն չ'ունի յիշեալ համակրելի գործիչին հետ, որուն անկեղծ հայրենասիրութիւնը վեր է կասկածէ:

— Տիար Թ. Ծաստիցեան, որ քաղաքի գերմանական հիւանդանոցին մէջ ամսէ մ'աւելի է կը սառապի չարաչար, այս վերջին օրերը բոլորովին ուժասպառ՝ ա՛լ յոյս մը չ'նեղեցեր

(\*) Յառաջդիմութեան կամ բարեկորդական օտկանը՝ այո՛, բայց բարդի մը՝ ո՛չ. Ծ. Խ.

վերականգնելու: Ահա՛ հայ գեղարուեստագէտի մը վախճանը:

— Մանթաշեանց մեծանուն սան Ե. Գրպասի ներկայացուցիչը Տիար Յովն. Մուրաճեանց, որ ամիս ու կէս կայ նրապա էր, քաղաքս վերադարձաւ երկու ամիսէ աւաւրեալ:

### ԱՐՏԱՔԻՆ

— Ս. Պապին դէ՛լ դարադրութեան գրոյց. — Օգոստոս 27ի հեռագրի մը նայելով՝ Ամերիկեան լրագիր մը կը ծանուցանէ թէ Ս. Պապը քիչ մնացեր է սպաննուելու անիշխանականէ մը, որ պահուրսած է եղեր վասիկանի պարտգներուն մէջ եւ որ ձերբակալուած է ոմիրը գործադրելէ առաջ:

— Ժանսախս 'ի Թորֆիա. Պաւրէ՛ւն քառուած 25 Օգոստոս թուով հեռագիր մը կ'ըսէ թէ՛ Կ. Պոլսոյ Առողջապահական Խորհուրդը 10 օրուան քառանքիմա դրած է Սուլիմայէ եկողներուն վրայ, վերջերս շատ մը ժանսախսի դէպքեր պատահած ըլլալով հոն:

— Անգլո - Թրանսլայեան պատերազմին նկատմամբ էֆօ սը Բարի կ'ըսէ թէ՛ Լահէյի մէջ գրոյց կը պարտի որ Իրաւարար Ասեմի անդամներէն ոմանի կը խորհին եղեր հրաժարիլ բողոքելու համար համաձայնութեամբ հաստատուած կանոններուն Անգլիոյ կողմէն բռնաբարման դէմ:

— Պրիստէլէ Տէյլի Մէյլի քառուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Պօքս յայտարարագիր մը պիտի հանէ յայտարարելով թէ՛ ապագային Պօէրներուն բռնած բոլոր գերիները վար պիտի դրուին զօ՛ւանսօներու մէջ, իբր պատան ծառայելու համար այն պարագային որ Քիչնը՝ պատերազմողներ չը հանչնայ Պօէրները:

— Անիշխանական մը, Միացեալ Նահանգներուն նախագահ Մաֆֆիէլիի

վրայ օրջահարի երեք գնդակներ արձա-  
կած էր, մէկը կուրծքին միւս երկուրը  
փորին: Սակայն, շնորհիւ բժշկական  
խնամներուն, Նախագահին առողջա-  
կան վիճակն արագ արագ լաւանալու  
վրայ է:

*Վերջին պահուն կը հեռագրուի  
թէ՛ Մաքսիմի մեռաւ:*

— Ո՛չ այնչափ հաւաստի է կար-  
ծել թէ՛ Չարը ձեռք բերած ըլլայ հաւ-  
սարար լուծում մը Հարա-Ս. փրկիչի  
պատերազմին: Գիտե՞նք արդէն որ Անգ-  
լիան ամենէն առաջ չ'էր ուզեր ընդու-  
նել ո եւ է միջամտութեան փորձ: Հի-  
մայ ի՞նչպէս կ'ըլլայ որ ասոր հաւանի  
այն պահուն որ պատերազմին վախճանը  
կ'ընդունարուի:

— Բարից հրահարակող *Քրո-Ար-*  
*մենեսի* համեմատ՝ Յուլիս 3 էն ի վեր  
թուրք կանոնաւոր զօրքեր, միացած  
Քուրդերուն, այդ մտական աւագակ-  
ներուն հետ, աւերած են շատ մը հայ  
գիւղեր, որոնց բնակիչները լեռները  
փախչել ստիպուած են: Այս պահուն,  
կարմիր Սուլթանը կը խաբի եղեր  
սարսղնել Սասունի հայկական համա-  
խոնումը: Կը տեսնուի թէ Ապս-Իլ-Հա-  
միս գէշընտրած է վայրկեանը. իր ներգ-  
ծոն կերպերով Ֆրանսան վիրաւորելու  
համար իր գաւրեշի կառավարութեան  
դէմ հանեց ամբողջ աշխարհի մամուլը  
եւ կը վախճուի թէ լեցուած բաժակը  
յորդել չըսայ:

— *Նիզոլա Բ. եւ Թրանսպայր.* —  
Ս. Բէքրապուրկէն «Ռափէլ»ի փառած  
հեռագիր մը կ'ըսէ Պ. Ուիթի հետ  
սերսիւ մտերմացած ռուս անձնաւորու-  
թիւն մ'ի՞նծի կը հաղորդէ Չարին ի  
Ֆրանսա այցելութեան մասին լրացու-  
ցիչ տեղեկութիւն մը զոր, հակառակ  
այս լուրին անակնկալին, չեմ վարա-  
նիր հաղորդելու ձեզի, տուած ըլլալով  
աղբիւրը ուսկից կը բխի:

«Նիզոլա Բ. Կայսրը, Ֆրանսա  
հասնելուն, հաւանութիւնը պիտի բերէ

եղեր Անգլիոյ ու Պօլոնեան միջեւ:  
Արդէն սկսած են եղեր բանակցութիւն-  
ները միջամտէն, եւ իբր թէ վերջնա-  
կան համաձայնութիւնը պիտի ըլլայ  
եղեր տեսակցութեան մէջ, զոր Չարը  
պիտի ունենայ Եսուարդ է. ի հետ դեռ  
դէպ ՚ի Տիւնիէր չը նաւած:

«Հաւանութեան պայմանները, կ'ա-  
պահովէ զիս իմ տեղեկասուն, թէ՛ Պօ-  
լոնեան եւ թէ՛ Անգլիացոց համար  
հաւասարապէս պատուաբեր պիտի ըլ-  
լան եղեր: Երկու Հանրապետութիւնները  
պիտի հանչուին եղեր բացարձակապէս  
անկախ Նահանգներ, բայց Մեծն Բրի-  
տանիա իրեն պիտի կցէ եղեր Ռէնսի  
հանգրուան երկիրը եւ պատերազմական  
տուգանք մը պիտի խնդրէ:

Այս տեղեկութիւնները կուտանք ա-  
մենախիս վերապահումով:

### ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

*Տեղւոյս Ա.ժ. Թագ. Խորհուրդին  
ոչ — ձրի փաստաբանը, Տ. Լ. Մկրտչ-  
եան, նոր ձև մ'ընտրած է ինքնա-  
պաշտպանութեան ու այդ ձևին դի-  
մած է, հասարակութեան ուշադրու-  
թիւնը շեղեցնելու համար բուն խնդրէն  
այն է՝ Սահմանադրութեան հոս աչ  
գործադրութիւնը:*

*Այդ, կոչում կ'ընենք մեր ողջմիտ  
հասարակութեան՝ բնաւ կարևորութիւն  
չիտալ բուն հարցէն զինք շեղեցնելու  
նպատակաւ թափուած շանքերուն,  
որովհետեւ ցարդ շարունակուող հրա-  
պարակային վիճարանութիւններով  
արդէն լիովին հաստատուած է թէ.*

1. Սահմանադրութիւնը բռնաբար-  
ուած է հոս.

2. Արդի Թագ. Խորհուրդը ժողովրդէն  
ընտրուած չէ, եւ հետեւաբար հակառակ-  
մանադրական է.

3. Տիրոջ երկպառակութիւնն ու

գալթակողութիւնք հետեւանք եւ սեղա-  
կան աչգ. գործերու՝ հակառակ օրինաց  
սեօրիւնութեանք.

Ճ. Ժողովուրդք՝ աչգ. օրինաց գոր-  
ծադրութիւնք միայն կը պահանջէ Ս.  
Առաջնորդէն, սկսելով Թ. աղ. Խորհուրդ  
մ'ընտրութենէն:

Ու մինչդեռ մենք այդ կենսական  
հարցովը կ'զբաղինք, հինգ ազգային-  
ներ, որոնց անունները շնորհալի կերպով  
կը պառկին Արշալոյսի 211 թիւի Ս.  
էջին մէջ նրեցող ողբումելի նամակի  
մը տակ, — որոնցմէ են պարբայնները  
հակահանրագրին — ինքնակոչ փաս-  
տաբաններ դարձած, ելեր հերքել  
կը փորձեն «Փիւնիկի» Թ. 15ի հրատա-  
րակութիւնն, ալ ոստիկաններուն առթիւ  
ստացող սեղեկութիւններ եւ, ըսելով:

Կը հարցնենք այդ հաւատացեալ  
եղբայրներուն. միթէ ոստիկաններ չ'ե-  
կան ու չ'մնացին եկեղեցին, միթէ  
Ս. Առաջնորդը կամ Թ. աղ. Խորհուրդը  
լուր չ'ունէ՞ր, եւն, եւն:

Մեր այդ երանելի հայրենակից-  
ներուն ՚ի պատասխանի, ստորեւ կը  
հրատարակենք հետեւեալը, զոր խըմ-  
բագրութեանս զրկած է Տիար Ե. Փար-  
շուճեան:

... Իմբազիր Տէր,

Արշալոյսի Սեպտ. 11ի 211դ թիւի  
Ս. էջին մէջ հինգ ազգայիններ. (Տեւար  
Յ. Չալապեան, Գ. Խիտեան, Արիս-  
սակես Ազարեան, Հանի Նշան ճե-  
պեան եւ Կ. Աղադանեան) նամակ  
մ'ստորագրելով կը յայտարարեն թէ՛  
«Փիւնիկի» Ճ Սեպտ. ին իմ հրատարա-  
կած բաց նամակս ուղղեալ առ Գեր-  
Տ. Յ. Այվազեան, ծայրէ ծայր աննիշդ  
եւ խեղաքիտեայ է եզեր, ինչպէս որ  
Ս. Առաջնորդը խոստովանած է եղեր  
իրենց:

Ես չ'եմ կրնար հաւատալ թէ Ս.  
Առաջնորդէն երբէք ըրած ըլլայ այդ-  
պիսի յայտարարութիւն մը քանի որ  
«Ճշմարտութիւնը» վերնագրով նամակիս  
բովանդակութիւնը կատարելապէս վա-  
ւերական է: Կը խնդրեմ միայն Ս. Ա.  
առաջնորդէն, փարատելու համար ա-

մեն կասկած, ընդունել անհրաժեշ-  
տութիւնը Քննիչ Յանձնաժողովի մը  
կազմութեան: Եթէ յիշեալ հինգ ստո-  
րագրողները կը պնդեն թէ Առաջնորդն  
իրօք ըրած է իրենց այդ յայտարա-  
րութիւնը, և եթէ չ'են ուղեր բացար-  
ձակ ստախօսներ կոչուիլ, կը պարտա-  
ւորեմ զիրենք գիմել Ս. Առաջնորդին  
և ընդունել տալ որ եզրպատհայ ազ-  
գայիններէն կազմուի Քննիչ Յանձնա-  
ժողով մը, պաշտօն ունենալով քննե-  
լու նամակիս ճշգրտութիւնը, կամ ան-  
ճշգրտութիւնը, անօրինելու դարձանին եւ  
յղեւու իր տեղեկագիրն ո՛ւր որ անկ է:

Կ'ուզեմ որ մե՛ր ազգայիններէն  
կազմուի այն, համոզուած ըլլալով թէ՛  
այսպիսի ներքին ինքիքները մե՛ր իսկ  
մէջ կարգադրելն աւելի համաձայն է  
մեր ազգային արժանապատուութեանը,  
նոյն Յանձնաժողովը կ'առաջարկեմ որ  
բաղկանայ հետեւեալ ականաւոր ան-  
կախ անձնաւորութիւններէն.

- Վսեմ. Տիգրան բաշա տ'Ապրօ
- » Աբրահամ Պէյ Բարթող
- (1) » Առաքել Պէյ Նուպար (ի բացակայութեան Վ. Հօրը)
- » Եուսուֆ Պէյ Ազիզ
- Ազն. Տօգդ. Մախոբեան.

Արդ, յո՛րչափ սոյն Յանձնաժողովը  
չի կազմուի ու չ'արձակէ իր վճիռը,  
նամակս կը մնայ նոյն և ճշմարիտ իր  
ամբողջութեամբ, որուն հակառակ ի՛նչ  
որ ալ գրուի, բնաւ նշանակութիւն  
չ'ունի. հետեւաբար այս մասին և ո՛չ  
մէկու պատասխանելու չ'պիտի զիջա-  
նիմ:

Եւ յարգանքօք  
Ե. ԹՈՒՐՇՈՒՃԵԱՆ

13 Սեպտ. 1901

ԱԶՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Արշալոյսի 211դ թիւի ԿԱՐԴԱ-  
ՅԻՆՔ ՈՒՇԻ ՈՒՇՈՎ. ԱՅՍ ՄԱՍԻՆ ՅԱ-  
ՉՈՐԴ ԹԻՒՈՎ.:

(1) Վսեմ. Պօղոս Բաւա Նուպարի  
բացակայութեանը իւր Վսեմ. որդին  
ուզեցի իննիչ կարգել յայապման ու  
ձգձգումերու, սեղի չը տալու համար:

Ծ. Յ.

# SALAMANDER

## ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն  
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագումար 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Իւրամատչելի գներ և պայմաններ

Իիւնը առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆՍ

Աղեփասնորիս, պզտիկ Մեկշիե Ապրօսուսա փողոց թիւ 10

# L'ALLIANCE

## Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագումար 5,000,000 ֆրանկ

## ԴԵՂԱՐԱՆ

# ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ընտիր դեղորայք, սրբախայիքներ եւ հանքային թարմ ջուրեր:

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ դեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիններու չափաւորութեան մասին:

Իեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ:

## ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ՎԱՅԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Իտալաքիս երևելի հայ տուններուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վաշաղոյր, ևն:

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Իիմել Հայկ. Մեծ Օրճարանը:

## ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՄՈՒՂԱԼԵԱՆ

ՄԵՇ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՕ

Արանց, կանանց ու մանկանց ամեն տեսակ կօշիկներ չափի վրայ ու պատրաստ, կը վաճառէ ապրանքները մաքուր, տոկոսն ու ձեւեր. կ'ըմբի բոլոր օտար վաճառատանց հետ, գիններուն աժանութեան կողմէն: